ների արժողութիւնը։ Մաքսի պահեստները փրկվեցան։

—

Այս յունվարի 23-ին (փետրվարի չորսին, Նոր տոմարով) ժամը 8-ին երեկոյեան, Թիֆլիսում տեսանելի էր բաւական պայծառ հիւսիսափայլ։ Մենք ստացանք մի նամակ Ախալցխայից, որ այնտեղ էլ մի և նոյն ժամանակ հիւսիսափայլը նկատելի էր։ „Կովկաս" լրագիրը ասում է, թէ հիւսիսափայլը տեսանելի էր մի և նոյն ժամանակ և Ստավրոպոլում, Պէատիգորսկում, Քութայիսում և Բագուի մէջ։

—

Մենք լսում ենք, որ այժմ ժողովված են Թիֆլիսում կովկասեան արքունի ուսումնարանների կառավարիչները (դիրեկտորներ), ուսումնարաններին վերաբերեալ զանազան խնդիրները վճռելու համար։ Լսում ենք, որ խօսելու նիւթերից պիտի լինի և տեղական լեզուների (հայոց, վրաց, և թիւրքաց) կովկասեան ուսումնարաններում դասաւանութեան խնդիրը։ Հասարակութիւնը իւրակի հետաքրքրվում է տեղեկանալ այդ մանկավարժական նիստերի արդիւնքների մասին, և անհամբերութեամբ սպասում է, որ նորա վճիռները յանձնվին տպագրութեանը։

—

Լսում ենք, որ քանի մի վրացի օրիորդներ դիտաւորութիւն ունին իրանց ազգային գրականութեանը ծառայել, իրանց լեզվով թարգմանելով ռուս և օտար լեզուներից նշանաւոր գրվածներ։

—

Այսքան ժամանակ Թիֆլիսում հայերէն թատրոն չկայ։ Թատրոնասէրները կամեցան պայման կապել երաժշտական ընկերութեան հետ, որ նոցա դաշնիձումը (հին Հայոց ուսումնարանի շինութիւնը) տան քանի մի (կարծեմ 15) ներկայացում.—ինչի չաջողվեցաւ...։ Բայց մխիթարվենք,—մենք Թիֆլիսում հայոց և վրաց թատրոնի տեղ այժմ ֆրանսիացու Օֆենբախի և ուրիշ հեշտասէր գրվածների ներկայացումներն ենք վայելում...։

—

Յունվարի 30-ին կատարվեցաւ փոխադարձ կրէդիտի ընկերութեան բացման հանդէսը։ Յունվ. 31-ից կսկսվի ընկերութեան գործունէութիւնը։

—

Մենք լսում ենք, իբր թէ, փոխադարձ կրէդիտի ընկերութեան ընդունելութեան մասնաժողովի և վարչութեան մէջ յայտնած է եղել ցանկութիւնը միջոց տալ քաղաքիս արհեստաւորներին ընկերութեան անդամ գրվելու և ուրեմն փոքր արդիւնաբերութեանը առաջարկել է ժան կրէդիտ։ Այդ նպատակով ընկերութեան կառավարիչը, իբր թէ, յանձն է առել հրաւիրել պ. Վալլինդին, որը արհեստաւորների գլխաւորն է (գլավնի բէմէսլէննի սատարչինա) միջնորդ դառնալ ընկերութեան և արհեստաւորների մէջ, համբարներին և նոցա ուստաբաշներին ընկերութեան կանոնագրութեան հետ ծանօթացնելու համար։

Տեսնենք։

—

„Արարատ" ամսագրի անցեալ տարվայ գնկտեմբերի տետրակը ստացվեցաւ։ Այդ ամսագրի բաժանորդների թիւը 1871 թուականին անցել էր 2000.

—

Մասնաւոր նամակից տեղեկանում ենք, որ Շամախու երկրաչարժը կրկնվում է, թէև թոյլ հարուածներով։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿ

(Պարոն Բաֆֆիի ուղևորութիւնից Պարսկաստանում։)

Անցանելով Արաքսը երկք օրից յետոյ հասայ Խոյ քաղաքին։ Այդ քաղաքը մեր հին Հէրն է։ Մի կեղտոտ քարվանսարայում (պանդոկում) իջևանեց մեր կարավանը։ Եւրոպայի մարդու երևիլը ասիական քաղաքում՝ իսկոյն չչուկ բարձրացուց։ Եւ քաղաքի իշխանը, որ էր մի Շահզադայ Նայիբուլ-Սալթանայի տոհմից, ուղարկում է լրտեսներ, գիտնալու իմ ով լինելը։ Ես յայտնեցի, թէ բժիշկ եմ ազգով Ընկլիս, և գնում եմ Թէհրան Անգլիացւոց դեսպանատունը։

Իմ բժշկական արհեստը և իշխանի որդւոյ հիւանդութիւնը առիթ տուին ինձ Շահզադայի հետ տեսնուելու։ Նա առաջարկեց ինձ իւր հիւանդ որդին, որոյ պատճառաւ ես ստիպուեցայ քանի օր Խոյում մնալ։ Շուտով առողջացաւ իմ հիւանդը։ Իշխանը ինձ վարձատրեց ընծաներով և հրամայեց քաղաքի մաքսապետին չառնել իմ բեռներից մաքս։

Երբ ես պատասխանեցի, թէ մաքսը ես արդէն վճարել էի Արաքսէն անցածին պէս սահմանագլխի առաջին մաքսատունում, իշխանը ինձ պատասխանեց—թէ Զարեկաստանում մի ապրանք, որ փոխվում է մի մահալից (գաւառից) դէպի միւսը, առմէն մի նահանգում առանձին մաքս պիտի վճարէ։

— Անպատճառ, պատասխանեց իշխանը, ամէն մի քաղաք մեր երկրում ունի իւր սեփական մաքսատունը, ուր առնում են մաքսը, ոչ միայն արտասահմանից եկած ապրանքներէն, այլ և Զարեկաստանի ապրանքներէն ու բերքերէն, որ փոխվում էին մի քաղաքից դէպի միւսը, կամ գիւղերից քաղաք։ Օրինակի համար, գիւղացի ջուլհակը, որ գործել էր մի քանի հատ կտաւ, կամ գիւղացի պառաւը, որ մանել էր մի քանի դրամ մանած, տանում են բազար վաճառելու, պիտի մաքս վճարեն։ Կամ թէ գիւղացին իւր երկրագործութեան, ու այդիի բերքերը տանում է բազար, նոյնպէս պիտի մաքս վճարէ։

Ես զարմացայ այդ անկարգ օրէնքի վերայ, և յայտնեցի իշխանին, թէ իմ բեռներս վաճառքի նիւթեր չեն, այլ նորա տանում են իմ ապտեկան և իմ անդամահատութեան գործիքները։

Նա պատասխանեց,—ինչ որ կրատների մէջքի վերայ տեղափոխվում է, պիտի մաքս վճարէ, թէ և հող լինի։

Ես պատասխանեցի թէ,—մի այդպիսի անկարգ օրէնսդրութիւնը չափազանց դժուարացնելու էր վաճառականութեան յառաջադիմութիւնը և զարգացումը, ինչու պիտի Շահը այդպիսի վնասակար կանոններ դնէր։

Իշխանը ասաց,—Շահը չէ դրել այդ կանոնները, դրա եղել են այդպէս խիստ հին ժամանակներից։ Մի ժամանակ Զարեկաստանում տիրում էր մլուքի-թաւաֆի (ՄՈՒԼՈՒՔԻ-ԹԱՒԱՖԻ)։ Եւ մեր երկրի ամէն մի գաւառը ձեռնտումէր զանազան միմանցից անկախ խանութիւններ, որոց մէջ կալուածատէր խաները էին որպէս նոյն գաւառների ինքնակալ և ինքնակամ իշխանները։ Նոքա միայն ստորագրուած էին Շահին նորանով, որ վճարում էին նորան մի մասնաւոր հարկ, և պատերազմում օգնում էին նորան։ Իսկ շատ անգամ ապստամբելով, այդ պարտաւորութիւնքը ևս չէին կատարում։ Եւ ամէն վաճառք, որ մտանում էր մի գաւառից գէպի միւսը, մի և նոյն էր, թէ նա մտանում էր մի այլ տէրութիւն։ այդ պատճառաւ վճարում էր և մաքս։ Թէև եօթանասուն տարի յառաջ Ագա-Մահմէտ-խանը նուաճեց բոլոր աւատականներին բայց նոցա կանոնները մնացին մինչև մեր օրերը։

— Բայց այժմ, որ Շահը ազատարար տիրում է բոլոր խանութիւնների վերայ։ Թող փոխէ այդ կանոնները ասացի ես։

Շահզադան ժպտեցաւ։

— Որքան միամիտ էք խօսում, պարոն, ասաց նա, Շահին ինչ ձեռք կը տայ փոխել այն կանոնը, որոյ պատճառաւ ամենայն տարի անագին գումարներ են լեցնվում Նորա գանձարանում....

— Ոչ թէ միայն մաքսը, աւելացրուց Շահզադան, այլ աւատական ժամանակների բոլոր կարգադրութիւնքը մինչև այսօր անփոփոխ մնում են ամէն մի գաւառներում։ Զորօրինակ. դու կը տեսնես ոչ միայն ամէն մի մահալում, այլ ամէն մի գիւղում, զանազան ծանրութեամբ քար և կիր, զանազան երկարութեամբ գազ և արշին, զանազան մեծութեամբ քօռ և սօմար, որպէս եղել են յառաջ, երբ այդ գիւղերը, կամ մահալները էին կալուածքներ մի որ և իցէ խանի կամ բէկի։ Բացի դոցանից, հողի մշակութեանց պայմանները բէգարների (հպատակների) հետ, նոցա զանազան տուրքերը, և հարկերն, դեռ ևս անփոփոխ մնալով, կրումեն աւատական ժամանակների ձևերը։

— Դրա մեծ արգելքներ են վաճառականութեան համար, կրկնեցի ես։ Ամբողջ տարիների ուսում հարկաւոր է սովորելու այդ բոլոր զանազանութիւնները....

— Զանազանութիւններ դու տեսնելու ես մեր երկրում շատ, առաւելապէս քրիստոնիաների և մահմետականների մէջ, զորօրինակ Հայերից առնում են գլխահարկ, բայց մուսուլմաններից ոչ։

Վերջին խօսքը ինձ շատ զգալի եղաւ, երբ լսեցի, թէ հայերը իւրեանց գլուխը պարանոցի վերայ պահպանելու համար հարկ են վճարում։

— Այդ անիրաւութիւն է խորութիւն դնել մի տէրութեան մէջ ազգերին։ պատասխանեցի ես։

Շահզադան նկատելով, թէ վշտացայ ես, ասաց,— դեռ հայերը լաւ դրութեան մէջ են մեր երկրում, հրէաներից շատ տեղ առնումեն սաղալ-խարջի, այսինքն մորուքի հարկ, որ նորա իրաւունք ունեցին մորուք թողելու և չը մեղանչելու Մովսէսի օրէնքի դէմ։

Ես նեղացայ այդ խօսքը լսելով։ բռնակալութիւն է այդ։ պատասխանեցի Շահզադին։

Միւս օրը ես պատրաստվումէի դուրս գնալ Խոյ քաղաքից։ Եւ առի ինձ հետ Մեսրոպին, գնացի բազար գնել մի քանի բաներ, և տեղային վաճառականութիւնը դիտելու։ Ճանապարհին սկսեց անձրևել, ես մուտացայ մի առնել հովանիս, դրա համար մինչև հասնելս ծածկած չարշիների տակ ոտքից ցցլուս թրջուեցայ։

Չարշիները լիքն էին բազմութեամբ։ Որովհետև բաց արձակ հրապարակներից մարդիկ հաւաքուել էին չարշիների ծածկած կամարների տակ, չը թրջուելու համար։ Բայց ես ուրախ էի, որ ազատուեցայ անձրևից բոլորովին չը մտածելով, թէ մի նոր անախորժութեան հանդիպելու եմ։

Չարշիներում հաւաքուած ամբոխից անց ու դարձը էր խիստ նեղ և դժուարին։ Բայց ես անհոգ և անփոյթ գնում էի, որովհետև իմ եւրոպական հագուստը առիթ էր տալիս խուժանին ինձ ճանապարհ տալ, որի հետաքրքրութեամբ նայում էին ինձ, որպէս մի հրէշի կամ նորատեսիլ կենդանու վերայ։

Ես անախորժ զգացմունքով նայում էի զզլբաշներին, որք թթու դէմքով, ծալապատիկ նստած էին իւրեանց փոքրիկ խանութներում, և նենգաւոր աչքերով նայումէին, որպէս խլուրդները նայում են իւրեանց բունների ծակերից։

Յանկարծ լսեցի գոռաց մի ձայն. „ով անհաւատ քաֆիր"։ Նոյն բոպէին յետ նայեցայ, տեսայ թուրքերը հաւաքուած ծեծումէին Մեսրոպին, Նենծողների գլխաւորն էր մի Սէիդ։ Ես յարձակուեցայ նորա վերայ և մի քանի անգամ զարգեցի գլխին ձեռքիս գաւազանով։ Բայց տեսայ չուտով հաւաքուեցան թուրքերը, և անտարակոյս ինձ ևս խառնելու էին խնդմ Մեսրոպի հետ, եթէ մի մոլլայ զգուշացրած չը լինէր կատաղի ամբոխին թէ, „դրան չունէք, կոնսուլ է այդ անհաւատը"։

Ես դուրս եկայ չարշիից և խիստ գնացի Շահզադայի մօտ, և յայտնեցի նորան բազարի անցքը։ Նա հրամայեց Սէիդին, իբրև անկարգութեան գլխաւորին, բանտ դնեն։

Այդ անցքը պատճառ տուեց ինձ ոչ թէ որ ես մնալ Խոյ քաղաքում։ Գիշերային պահուն Շահզադան ինձ իմացում տուաւ, թէ քաղաքի բոլոր Սէիդները (մարգարէի որդիքը) ապստամբած, կամենումեն կտրել բանտի դռները. և բռնութեամբ դուրս տանել իւրեանց եղբայրը։

Ես մտածելով թէ իշխանի պատուին պակասութիւն կը բերէր մի այդպիսի յարձակումը Սէիդների, խորհուրդ տուի Շահզադին, որ բաց թողու կալանաւորին, ձևացնելով, թէ ես խնդրել էի, որ բաշխուի նորա պատիժը։

Իշխանը բաւականին նեղացաւ, որ չը կարողացաւ պատժել իմ վնասացնող Սէիդին։ Եւ ասաց ինձ, Սէիդները, իբրև մեր մարգարէի սերունդը, ունին մուսուլմանների մէջ ծանրակշիռ յարգ և համարում. և մենք շատ անգամ դժուարանում ենք պատժել նոցա որ և իցէ անկարգութեան համար, կասկածելով, մի գուցէ շարժենք ռամիկ խառնիճաղանջի կատաղութիւնը։

Մինչև այն ժամանակ ես չէի հասկանում, թէ ինչ պատճառաւ Սէիդը ծեծեց Մեսրոպին, բայց Շահզադան ասաց ինձ, թէ.—ձեր ծառան անձրևից թրջուած, անզգուշութեամբ դիպել էր Սէիդի հագուստին, և պղծել էր նորան։

Եւ աւելացրուց նա —անձրևային օրերում, հայերին թրջուած անկարելի է մանգալ բազարում և քաշել մուսուլմաններին։

—Ուրեմն Հայը Զարեկաստանում այդպիսի հանգամանքներում ունի հնդկական Զարեայի նշանակութիւնը. ասացի ես։

— Շահզադան չը հասկացաւ իմ ասածը. միայն յայտնեց, թէ—մեր մոլլաները այդ խորութիւնը գրած են քրիստոնեաների և մուսուլմանների մէջ։

— Միա գնելով այդ պայմանին, ուրեմն դուք պիտի գարշիք բոլոր ուտելի նիւթերից, որք դուրս էին գալիս քրիստոնէից ձեռքէն, հարցուցի ես։

— Այո՛, ասաց իշխանը, մենք համարումենք պիղծ ամէն ինչ, որ դուրս էր գալիս քրիստոնիայի ձեռքից։

Եւ արդարև, ես նկատեցի որ իշխանը չէր ծբխում այն խէչլանից, որին դիպել էին իմ չրթունքը։ Եւ գաւաթը, որով խմել էի ես թէչ կամ գինի, հասկացայ, որ գրատում կոտրումէին։ Եւ թէչվէ, հասկացայ, որ գրատում կոտրումէին։ Եւ թէպէտ քանիցս անգամ պատահեցաւ, ես ու իշխանը ուտում էինք մի սեղանի վերայ ես նկատումէի, նա ամենևին չէր խառնակվում ինձ հետ, և ձեռք չէր մեկնում այն կերակուրներին, որոց դիպել էր իմ ձեռքը, թէպէտ Զարսիկները, միշտ քանի հոգի խառն ուտումեն մի ամանից։ Այլ ինձ ասացին, թէ իմ սեղանից աւելացած կերակուրներն գրատում, որպէս սովորութիւն էր Զարսիկներին, չէին ուտում ծառայքը, այլ ածում էին շների առջև։

Այժմ սիրելի ընկեր, կարող էք գիտենալ Զարեկաստանի մէջ ոչ միայն Հայերի, այլ բոլոր քրիստոնեաների խղճութեան և աղքատութեան իսկական պատճառը։ Մի ազգ, որոյ ապրուստի գլխաւոր աղբիւրքն էին երկրագործութիւն, խաչնարածութիւն, իբրև մի այդպէս բան, չէր կարող վաճառել իւր այնքատութեան արդիւնքի հում բերքերը։ Եւ այդպէս, Հայերը Շիիդեան մուսուլմանների մոլեռանդութեան անտերողամտութիւնից, զբրկուելով իւրեանց վաստակների թաց բերքերից արդիւնք չանել է, մնում են նորանց չոր բերքերը, որպիսի են ցորեան, գարի և դոցա նմաններ։ Բայց և դոցանից կալուածատիրոջ հողերի ծանր վարձադրութեան պատճառաւ, և կառավարութեան անթուելի հարկերի պատճառաւ, ոչ միայն երկրագործը չէ կարողանում աւելացնել մի բան վաճառքի համար, այլ դժուարութեամբ լցուցանումէ իւր ապրուստը։

Ուր մնաց այն, որ անկարգութիւններից թուրքերը աւտազակաբար կողոպտում են միշտ Հայերի մշակութեանց բերքերի մեծ մասը, այնպէս որ, շատ անգամ խեղճ երկրագործը հունձքի արտերից հաւաքումէ կալի մէջ ցորնի խուրձերը առանց հասկերի և իւր այդին միայն հոտաղ է առնում, իսկ ողկոյզները աւազակների բաժին են դառնում։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Իտալական „Il Diritto" լրագրում կարդում ենք, որ Զմիւռնիայում (փոքր Ասիայում) մահմետական բնակիչները մեծ խռովութեան մէջ են։ Մահմետականները մեծ թուով քրիստոնէութիւն են ընդունում։ Մկրտվածների թիւը հասաւ քսաներկուքսանի։ Մինչև 3 հազար։

— Գերմանական „Neue Freie Presse" լրագիրը իր առաջնորդող յօդվածի մէջ պ. Տիէրի առաջարկած նոր հարկերի դէմ է խօսում։ Նա յիշում է նմանապէս այն աւելորդ ծախսերը, որ այժմեան ֆրանսիական կառավարութիւնը անում է զորքի վերաբերութեամբ։ Ֆրանսիայի հարկերի գումարը աճել է այժմ 300 միլիոն ֆրանկով։

— „Կովկաս" լրագիրը յետագայ հետաքրքիր թուանշաններ է տալիս Կ. Պոլսի Հայ-լուսաւորչական ուսումնարանների մասին։ Ազգային ժողովից հրատարակված անցեալ տարվայ (1871) հաշուից երևում է, որ Կ. Պոլսում Հայերը ունին արական և բարձր ուսումնարաններ 33, իգական 28, վարժապետների թիւը 198 է, վարժուհիների 28, դաստիարակիչների և վարժուհիների 69։ Արական սեռի աշակերտները 3842 են թուով, իգական 1862։ Տարեկան ծախսը հասնում է մինչև 120,000 ռուբլի։

— Իտալական „Il Diritto" լրագիրը ասում է, որ իտալական Կալիարի քաղաքը (Սարդենիա կղզու վրայ) նշանակվեցաւ նոր եպիսկոպոս դեր. Բալմա։ Երբ նա հանդէսով մտնում էր քաղաքը, մի կողմից լսվեցաւ „կէցցէ պապ Պիոս IX-ը"— „կէցցէ եպիսկոպոսը" ձայները, իսկ միւս կողմից ժողովրդի մի մասը աղաղակում էր „կորչի Պապը"—„կէցցէ Մազինի"։ Երկու կողմից էլ վիրաւորված դրութեան մէջ էին և մի քանի կռիւներ պատահեցին։

— Բէլգիական „Indépendance Belge" լրագիրը ասում է, թէ Թիւրքիայում մտցնվեցան նոր դատաստանական հիմնարկութիւններ։ Երեք դատաւորների թուումը մնաց պիտի անչուշտ քրիստոնեայ լինի։ Ի հարկէ, աւելացնում է լրագիրը, քրիստոնեաները դեռ ևս սորանով բաւական չեն, բայց տէրութիւնը առ այժմ չէր կարող նոցա աւելի մեծ իրաւունքներ տալ դատաստանական հիմնարկութեան վերաբերութեամբ, որտեղ դարձեալ վճիռների մէջ պիտի մեծ դեր խաղայ „շարիաթը" այսինքն մարգարէի օրէնքը։ Ինչ և իցէ այդ դատաստանական նոր կանոնագրութիւնը նշանաւոր բարելաւութիւն է ժողովրդի վիճակի մէջ, և անկարելի է իսկոյն պատանչել, որ նորա հանձնն կատարելագործութեան այն դրութեանը, որին նորա ապագայում պիտի հասնեն։

— Իտալական „Il Diritto" լրագրում կարդում ենք, որ Զվիցերիայի Բէրն կանտոնի աշխարհական և հոգևոր իշխանութեան մէջ կայ երկպառակութիւն։ Կանտոնի խորհուրդը դիմեց եպիսկոպոսին, յայտնելով նորան, որ եթէ հոգևորականները շարունակեն իրանց զօրութիւնը և հասարակական նշանակութիւնը ի չար գործ ածել, քարոզելով ամբիոններից քաղաքական մտքեր և անդադար ինտրիգաներ անելով,—Բէրնի խորհուրդը ստիպված կը լինի դիմել Զվիցերիայի մեծ խորհրդին և զանգատ ներկայացնել հոգևորականների վարմունքի մասին։ „Գերմանիայում, աւելացնում է իտալական լրագիրը, հոգևորականների այդ տեսակ քաղաքական յանցանքը անպատճառ կը պատժուէր, օրէնքի զօրութեամբ, 2 տարվայ բանտարկութեամբ։